

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6.16	Կենսամիջոցներ	6.16.2
6.16.1	Հողատերերի և հողօգտագործողների ֆիզիկական և տնտեսական կարգավիճակի խախտում.....	6.16.2
6.16.2	Հովիվների տնտեսական կարգավիճակի խախտում.....	6.16.14
6.15.1	Մոնիթորինգ և աուդիտ	6.16.26
	Եզրակացություն	6.16.31

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 6.16.2:	Ծրագրի ազդեցությունը կրող հովիվներ	6.16.16
Աղյուսակ 6.16.3:	Ազդեցության գնահատում, տնտեսական կարգավիճակի խախտման ազդեցությունը հովիվների վրա	6.16.25
Աղյուսակ 6.16.4:	Ազդեցություն ամփոփում - կենսամիջոցներ.....	6.16.25
Աղյուսակ 6.16.5:	Մոնիթորինգի ցուցանիշներ և ազդեցությունների մեղմացում	6.16.27

ՆԿԱՐՆԵՐ

Նկար 6.16.1:	Ծիրանի այգիներ կույտային տարրավազման հրապարակի ստորին մասում	6.16.5
Նկար 6.16.2	Սեզոնային հովիվներ Խնձորեսկ գյուղից (գտնվելու վայրը՝ ԴԱԼ-ից դեպի արևելք ընկած հատվածն է), 2014թ. հուլիս.....	6.16.18

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 6.16.1	Հողատերերի և հողօգտագործողների ուղեցույց. Հողի ձեռքբերում և փոխհատուցում (2014թ.)
-----------------	---

6.16 Կենսամիջոցներ

Այս բաժնում ներկայացվում է Բաժին 6.15-ում նկարագրված հողի վրա Ծրագրի ազդեցությունների վերաբերյալ վերլուծությունը: Այս բաժինը անդրադառնում է Ծրագրի հարակից համայնքների տարբեր ասպեկտների վրա ազդեցություններին: Ազդեցությունները հետևյալն են.

- Հողատերերի և հողօգտագործողների տնտեսական կարգավիճակի խախտում, և
- Հովիվների տնտեսական կարգավիճակի խախտում

Համաձայն ՄՖԿ-ի ԿՍ 5-րդ կետի և ՎՁԵԲ-ի ԿՊ 5-րդ կետի, Ծրագրի շրջանակներում մշակվել է Հողի իրավունքի ձեռքբերման և կենսամիջոցների վերականգնման պլան (ՀՁԿՎՊ), որն ուղղված կլինի Ծրագրի կողմից տնտեսական կարգավիճակի խախտման վրա թողած ազդեցություններին, հատկապես հողատերերի և հողօգտագործողների, ներառյալ սեզոնային հովիվների կրած ազդեցություններին: Ծրագրում կատարված փոփոխություններից հետո, հավելված է ավելացել նաև ՀՁԿՎՊ-ին (տես Հավելված 8.23): Հաշվետվության սույն գլուխը ամփոփում է հողի ձեռքբերման և կենսակերպի վերականգնման միջոցների վերաբերյալ մանրամասներ, ամբողջական մանրամասները հասանելի են ՀՁԿՎՊ-ում և համապատասխան հավելվածում, որոնք նույնպես հասանելի են հասարակությանը): ՀՁԿՎՊ-ով նախատեսված գործողությունները կիրականացվեն մի քանի տարվա ընթացքում՝ դրանց կայունությունը ապահովելու նպատակով:

6.16.1 Հողատերերի և հողօգտագործողների ֆիզիկական և տնտեսական կարգավիճակի խախտում

Ծրագրի գործողությունների ազդեցությունը հողատերերի և հողօգտագործողների ֆիզիկական և տնտեսական կարգավիճակի խախտման վրա

Ամուլսարի Ծրագրի շրջանակներում շինարարության և շահագործման համար անհրաժեշտ հողատարածքը գտնվում է Գնդեվազի, Սարավանի և Գորայքի համայնքներում, ինչպես պատկերված է Նկար 6.16.1-ում: Գորայքում Ծրագրի

ազդեցությունը կկրեն միայն պետական հողերը, իսկ Գնդեվազի և Սարավանի համայնքներում՝ մասնավոր հողերի սեփականատերերը:

Հողի օգտագործման և կենսակերպի վրա ազդեցության առումով Ծրագրի կառույցները կարելի է ամփոփ դասակարգել հետևյալ կերպ.

- Բարձրադիր տարածքներ, ծ.մ. 2000մ բարձրության վրա: Այստեղ են գտնվում հանքափոսերը և հանգույցները, այդ թվում՝ գործող հետախուզական ճամբարը, մանրացնող հանգույցները, ԴԱԼ-ը, բեռնատարների սպասարկման կայանատեղին և վարչական կառույցները, պայթուցիկ նյութերի պահեստը, և փոխակրիչի մի մասը: Այդ բարձրադիր տարածքներում մասնավոր հող չկա, և հողի ներկայիս օգտագործումը կփոփոխվի այնքանով, որ կհնձվի ԴԱԼ-ի շուրջը աճող խոտը, որ մի շարք սեզոնային հովիվներ օգտագործում էին իրենց անասունները այդ տարածքում ամռան ընթացքում (մայիս - սեպտեմբեր / հոկտեմբեր) արածեցնելով:

- Փոխակրիչի ցածրադիր մաս, էլեկտրաէներգիայի ենթակայան, հանքի մերձատար ճանապարհ և քարհանքեր: Ազդակիր տարածքը օգտագործվում է հիմնականում խոտի և ցորենի աճեցման համար:

- Ցածրադիր տարածքներ, ծ.մ. 1,700մ բարձրության վրա: Այստեղ են գտնվում ԿՏՀ-ն, այդ թվում ԱԴՎ-կայանը և ժամանակավոր շինարարական ճամբարը: Այս տարածքները օգտագործվում են գյուղատնտեսական արտադրանքի, այդ թվում, պտղատու այգիների (հիմնականում ծիրան), ցորենի և խոտի աճեցման համար:

Հողատերերի և հողօգտագործողների ֆիզիկական և տնտեսական կարգավիճակի խախտման հնարավոր ազդեցությունները

Հողի վրա վերոհիշյալ ազդեցությունների հետևանքով առաջացած ֆիզիկական և տնտեսական կարգավիճակի խախտման աստիճանը կախված է ներկայիս տնային տնտեսությունների կողմից հողերի օգտագործումից, տնային տնտեսությունների քանակից, ազդեցության տևողությունից, հողօգտագործման իրավունքից և ազդակիր տնային տնտեսությունների հնարավոր խոցելիությունից: Սույն բաժինը անդրադառնում է այդ թեմաներից յուրաքանչյուրին առանձին:

Հողօգտագործման տեսակները

Գյուղատնտեսության մի քանի տեսակ է նկատվում ազդակիր տարածքի տարբեր մասերում:

- Հիմնականում հյուսիս-արևմուտքում՝ ԿՏՀ-ի տեղամասում, մի շարք փոքր հողատարածքներ օգտագործվում են մշակաբույսերի աճեցման նպատակով: Արտադրանքի մի մասը վաճառվում է, սակայն զգալի մասը պահվում է սեփական օգտագործման և պահածոյացման համար: Այդ հողատարածքներում աճում են խառը մշակաբույսեր (որպես կանոն, կարտոֆիլ, մի քանի պտղատու ծառեր, լոլիկ, եգիպտացորեն, պղպեղ, կաղամբ և այլն)
- Դաշտավայրը, որը կազմում է ԿՏՀ-ի տեղամասի հիմնական մասը, օգտագործվում է ծիրանի տնկիների համար, տես Նկար 6.16.2 (ընդհանուր առմամբ մոտ 25 հա պտղատու այգիների): Սրանք Գնդեվազ համայնքի համեմատաբար վերջերս ընդլայնված ծիրանի այգիներն են, որոնք գտնվում են բնակելի տարածքի անմիջապես հարավում, որտեղ առկա է ռոտզման ջուր: Այս այգիները օգտագործվում են կոմերցիոն նպատակներով: Այստեղ ֆերմերները համադրում են ընտանիքի անդամների և վարձու աշխատողների աշխատանքը, իսկ բերքը ամբողջությամբ վաճառվում է: Ծիրանի այգիների մի քանի հողատարածքներ օգտագործվում են տարեկան մշակաբույսերի, մասնավորապես գարնանացան ցորենի, սիլոսի համար նախատեսված եգիպտացորենի ու գարու աճեցման համար: Ծիրան աճեցնող ֆերմերներից ոմանք օգտագործում են մրգատու այգիների մի

փոքր մասը որպես սեփական հողամաս: Որոշ դեպքերում, գյուղացիները հավաքում են ծիրանենիների շարքերում աճող խոտը:

- Ամենաբարձր լեռնային տարածքներում (ԿՏՀ-ի և փոխակրիչի արևելյան մասում) կլիման ավելի ցուրտ է, իսկ տեղանքը քարքարոտ է և գտնվում է զառիթափ լանջերին, այդ պատճառով այստեղ միայն խոտ է աճում: Որտեղ հնարավոր է տրակտորի մուտքը, խոտը հավաքվում և տեղափոխվում է Գնդեվազ, իսկ մնացած մասերում՝ տարածքը պարզապես օգտագործվում է որպես արոտավայր:



Նկար 6.16.1. Ծիրանի այգիներ կույտային տարրավազման հրապարակի ստորին մասում

Ազդեցության աստիճանը

Ծրագրի ազդեցությունը կկրեն ընդհանուր առմամբ 238 մասնավոր հողակտորներ 132,25 հա ընդհանուր մակերեսով: Հողի ձեռքբերման ընթացքը բաժանվել է մի շարք փուլերի: 1-ին և 2-րդ Փուլերը անց են կացվել 2015 թ., ընդհանուր առմամբ 238 հողամաս է ձեռքբերվել: Բոլոր 144 տնային տնտեսությունները, որոնք Ծրագրի ազդեցության հետևանքով կարող են կորցնել իրենց մասնավոր հողակտորները 1-ին և 2-րդ Փուլերում, մասնակցել են կենսամիջոցների վերաբերյալ հարցմանը 2014թ.-ի հունիս-հուլիս ամիսներին: Թեև հարցմանը մասնակցած բոլոր տնային տնտեսություններն ունեն գյուղատնտեսական նպատակով օգտագործվող մասնավոր հողամասեր, որոնք կարող են կրել Ծրագրի ազդեցությունը, այդ տնային տնտեսությունների միայն 9% է նշել, որ հողագործությունը իրենց հիմնական զբաղմունքն է: Այդ ընտանիքների

մեծ մասը իրենց ապրուստը վաստակում է համադրելով հողագործությունը այլ գործունեության հետ, այդ թվում՝ վճարվող աշխատանքով (նրանք, ովքեր աշխատում են Գնդեվազ համայնքում, հիմնականում աշխատում են հասարակական կազմակերպություններում, օրինակ՝ կրթական, առողջապահական, համայնքային հաստատություններում, իսկ նրանք, ովքեր աշխատում են Ջերմուկում, ներգրավված են հիմնականում տեղի մասնավոր ձեռնարկություններում):

Եվս 22 հողամաս (13 հա, 17 սեփականատերեր հայտնի են, իսկ երեքը դեռ պետք է հաստատվեն), կարող են ազդեցություն կրել փոխակրիչից (հայտնի է որպես 4-րդ Փուլ, որը պահանջում է 15 մետր հողաշերտ հանքի կենսափուլի համար: Հետագայում այդ հողը կվերականգնվի և կհանձնվի սեփականատերերին): 3-րդ Փուլը կանդրադառնա 15 հողամասերի, ավելի քան 14 հա, 7 ազդակիր հողատերերի վրա: Այդ փուլերի համար հողի ձեռքբերումը կիրականացվի 2016 թ:

Նախագծված է, որ Ծրագիրը պետք է հնարավորինս նվազագույնի հասցնի տեղահանումը: Թեև Ծրագրի տեղամասը ուղղակիորեն չի ազդի տների վրա, երեք բազմաբնակարան շենք (որոնցից մեկը բնակեցված) գտնվում է ԿՏՀ-ի և Գնդեվազ գյուղի միջև ընկած տարածքում: Պարզվել է, որ այս տարածքը հարմար է Ծրագրի շինարարության և շահագործման փուլերում որպես մոնիտորինգի հիմնական կետ ծառայելու համար (առավել մանրամասն տես Հավելված 8.14-ում): Բազմաբնակարան շենքի և դրա սեփականատերերի և բնակիչների հետ քննարկումները ցույց տվեցին, որ նրանք պատրաստ են տեղափոխվել մեկ այլ վայր: Սա Ծրագրով նախատեսված ֆիզիկական կարգավիճակի խախտման միակ դեպքն է: Այս բազմաբնակարան շենքին կից վերջերս ստեղծվել է անասունաբուժական ֆերմա և կաթի հավաքման կետ: Չնայած ֆերման գտնվում է ԿՏՀ-ի հարևանությամբ, դրա տարածքում չկան բնակարաններ կամ տներ:

Ազդեցության տևողությունը

Ծրագրի համար անհրաժեշտ հողատարածքի որոշ հատվածը պետք է գալու հանքարդյունահանման փուլում (մոտավորապես 12 տարի): Դա մասնավորապես վերաբերում է Գնդեվազի և Սարավանի համայնքներում գտնվող, ջարդիչ կայանի, ԿՏՀ-ի և ԴԱԼ-ի միջև փոխակրիչին: Հանքի փակումից հետո, այդ տարածքում

գտնվող ցանկացած կառույց կարող է հեռացվել, իսկ հողատարածքը կրկնակի անգամ կեզրագծվի, կվերականգնվի (կոեկուլտիվացվի) և կհանձնվի համայնքի սեփականությանը՝ համայնքային օգտագործման համար, օրինակ՝ որպես արոտավայր կամ անտառային հողատարածք: Ելնելով լանջի թեքությունից և անվտանգության նկատառումներից՝ հանքափոսը հնարավոր չի լինի օգտագործել որպես արոտավայր և, ամենայն հավանականությամբ, չի վերադարձվի համայնքի սեփականությանը:

Հողի սեփականության իրավունքը

Հողամասերի մեծ մասը որպես ժառանգություն ստացվել է սկզբնական սեփականատերերից, ում այդ տարածքները հատկացվել էին Հայաստանում հողերի սեփականաշնորհման տարիներին (1990-ականների սկզբին): Արդյունքում, այդ հողերն այժմ հանդիսանում են սկզբնական սեփականատերերի իրավահաջորդների համատեղ սեփականություն: Բոլոր գրանցված համասեփականատերերը հայտնի են դարձել հողի ձեռքբերման գործընթացի փուլում, ինչը մանրամասն նկարագրված է ՀԶԿՎՊ-ում:

Խոցելի մարդիկ

Խոցելի մարդիկ այն մարդիկ են, ովքեր սեռի, ազգության, տարիքի, ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության, տնտեսական կամ սոցիալական կարգավիճակի բերումով կարող են ավելի զգալի բացասական ազդեցություն կրել հողի ձեռքբերման գործընթացի արդյունքում, քան մյուսները, և ում փոխհատուցում պահանջելու կամ դրանից օգտվելու ունակությունը կարող է սահմանակափակ լինել: Ամուլսարի Ծրագրի համատեքստում, հնարավոր խոցելի մարդիկ են համարվում՝ հաշմանդամները (հոգեկան կամ ֆիզիկական), ծանր հիվանդ անձինք, ծերերը (հատկապես, երբ նրանք ապրում են մենակ), այն ընտանիքները, որոնք կանայք են գլխավորում և որոնք ունեն սահմանափակ կենսամիջոցներ, այն տնային տնտեսությունները, որոնք ունեն շատ սահմանափակ կենսամիջոցներ կամ ընդհանրապես չունեն, և այրիներն ու որբերը: Գնդվազ համայնքի սեփականատերերի և հողօգտագործողների կենսամիջոցների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքում, ընտրվել են հնարավոր ազդակիր/խոցելի

մարդիկ: Դրանք են.

- 15 ընտանիքներ, որոնք կանայք են գլխավորում (11.7%): Մեծ մասը մեկ անձից (սովորաբար տարեց այրիներից) կազմված տնային տնտեսություններ են: Այս ընտանիքները նախապես գնահատվել են որպես պոտենցիալ խոցելի:
- 22 ընտանիքներ, որոնք գլխավորում են 65 տարեկան կամ բարձր տարիք ունեցող անձիք: Այս ընտանիքները ևս նախապես գնահատվել են որպես պոտենցիալ խոցելի:
- 1 ընտանիք ճանաչվել է որպես «շատ աղքատ և անկարող հոգալու իր հիմնական կարիքները»
- 32 հաշմանդամ (դրանք, համաձայն ՀՀ օրենսդրությանը, հաշմանդամության 1-ից մինչև 3-րդ կարգ ունեցող անձիք են կամ անցկացված ուսումնասիրության համաձայն՝ քրոնիկական և ծանր հիվանդ անձիք են) ազդակիր տնային տնտեսություններում:
- Բոլորը միասին, և հաշվի առնելով կատեգորիաների հնարավոր համընկնումը, 27 տնային տնտեսություններ նախապես ճանաչվել են որպես պոտենցիալ խոցելի:

Հաշվի առնելով բոլոր այդ գործոնները՝ հողի գնման գործընթացը կարող է ազդել այդ հողերի սեփականատերերի և հողօգտագործողների կենսակերպի վրա (որպես կանոն՝ շատ դեպքերում համասեփականատերերից մեկի կամ մեկ կոնկրետ հողօգտագործողի վրա): Սա համարվում է տեղայնացված բացասական ազդեցություն, որն ունի միջինից երկարատև ազդեցության բարձր մակարդակ: Երկրորդ ազդեցությունը վերաբերում է ԿՏՀ-ի հարևանությամբ գտնվող բազմաբնակարան շենքի մի բնակչի ֆիզիկական կարգավիճակի խախտմանը: Սա համարվում է տեղայնացված բացասական ազդեցություն, երկարաժամկետ, և ազդեցության բարձր մակարդակով:

Հողատերերի և հողօգտագործողների տնտեսական կարգավիճակի խախտման ազդեցությունների մեղմացում

Ծրագրի շրջանակներում հողի գնման հետ կապված բոլոր գործողությունները իրականացվում են համաձայն ՄՖԿ-ի ԿՍ 5-րդ կետի և ՎԶԵԲ-ի ԿՊ 5-րդ կետի՝ ի

հավելումն Հայաստանի օրենսդրության: Ծրագրի ռազմավարությունը՝ կապված հողի հասանելիության ապահովման հետ, ներկայացված է Հողի իրավունքի ձեռքբերման և կենսամիջոցների վերականգնման պլանում (ՀԻՁԿՎՊ) և դրա հավելվածում, (տես Հավելված 8.23) և հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- Ֆիզիկական տարիանումը նվազագույնի է հասցված (Ծրագրի կառույցները բնակելի տարածքներին չեն հարում, և Ծրագրի հետ կապված՝ միայն մեկ հոգի ստիպված կլինի տեղափոխվել),
- Հողի իրավունքի ձեռքբերման հարցը կարգավորվում է բանակցությունների միջոցով՝ համաձայն ԿՍ 5-րդ կետի և ԿՊ 5-րդ կետի, օտարումը համարվում է ծայրահեղ միջոց, որը կկիրառվի միայն այն դեպքում, եթե ողջամիտ, բարեկամական կարգավորման հասնելու բոլոր միջոցները սպառվեն, փոխհատուցումը կատարվում է լրիվ փոխարինման արժեքով,
- Հող հողի դիմաց տարբերակը հասանելի է նրանց համար, ովքեր գերադասում են հողը դրամական փոխհատուցման փոխարեն,
- Ազդակիր հողերը և մարդիկ հայտնաբերվում են կադաստրային տեղեկատվության հիման վրա, որը լրացվում և հավելյալ ստուգվում է անհրաժեշտության դեպքում,
- Կենսամիջոցների վրա ազդեցությունները գնահատվում են և անհրաժեշտության դեպքում մեղմացնող միջոցառումներ են ձեռնարկվում,
- Բոլոր այն դեպքերում, երբ դա օրինապես, տեխնիկապես և տնտեսապես հնարավոր է, Ծրագրի համար օգտագործված հողը բերվում է իր նախնական վիճակին և վերադարձվում սեփականատիրոջը, հանքավայրի կառուցման և շահագործման նպատակով օգտագործումից հետո,
- Նախատեսվել է գանգատարկման մեխանիզմ,
- Ազդակիր մարդիկ տեղեկացվում են, և նրանց հետ խորհրդակցություններ են անցկացվում,
- Խոցելի անձինք հայտնաբերվում են, և նրանց աջակցություն է ցուցաբերվում:

Հողի ձեռք բերման գործընթացը ներառում է հետևյալ 5 քայլերը.

1. Ազդակիր հողակտորների, հողի սեփականատերերի և հողօգտագործողների, ներառյալ՝ ոչ պաշտոնական հողօգտագործողների, բացահայտումը

կադաստրի տվյալների, հողի սեփականության իրավունքի ուսումնասիրության և իրավական փաստաթղթերի հավաքման հիման վրա (հողի սեփականության իրավունք, վարձակալություն, վարկավորում, արգելանք, մահվան վկայականներ և ժառանգությունը որոշելու կտակներ, լիազորագրեր),

2. Ազդակիր հողերի սեփականատերերի և հողօգտագործողների վերաբերյալ սոցիալ-տնտեսական հետազոտություն,
3. Ազդակիր հողակտորների վրա գտնվող գույքի, ներառյալ շինությունների, ծառերի և մշակաբույսերի գույքագրում,
4. Ազդակիր հողամասի սեփականատիրոջը և առկայության դեպքում՝ հողօգտագործողին ուղղված փոխհատուցման (ներառյալ հողատարածքը հողատարածքի դիմաց տարբերակը) առաջարկ, խորհրդատվություն և Նախնական համաձայնագրի ստորագրում (օպցիոն համաձայնագիր),
5. Գործարքի հաստատում (առք ու վաճառքի պայմանագիր) և հողակտորի փոխանցումը Լիդիան ընկերության սեփականությանը:

Ազդակիր հողամասերի վերաբերյալ կադաստրային տեղեկությունները ստացվել են 2014թ. և 2015թ. Ծրագրի տեղամասում գտնվող համապատասխան հաստատությունից՝ ըստ վերը նշված քայլ 1-ի: Այդ տեղեկությունները ներառում են սեփականատիրոջ (կամ համասեփականատերերի) վերաբերյալ տվյալներ և հողի դասակարգմանը վերաբերող տեղեկություններ (վարելահող է, թե ոչ, բուսավոր է, թե ոչ), ինչն անհրաժեշտ է հարկման նպատակով կադաստրային արժեքը որոշելու համար:

Կետ 2-ում նշված սոցիալ –տնտեսական հետազոտությունը ձեռնարկվել է 2014թ. Հունիս և հուլիս ամիսներին՝ ներգրավելով 128 ազդակիր տնային տնտեսություն, և ձգվել են մինչև 2015թ.-ի նոյեմբեր, ավելի ուշ փուլերի հողի ձեռքբերման ազդակիր տնային տնտեսությունները ևս ներգրավելու համար: Հետազոտության նպատակն էր պարզել յուրաքանչյուր ազդակիր ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանները՝ համաձայն միջազգային պահանջների: Մշակաբույսերի, ծառերի և շինությունների գույքագրումը անց է կացվել միևնույն ժամանակահատվածում, տվյալների հավաքման վերջնաժամկետ ստեղծելով հողի ձեռքբերման յուրաքանչյուր փուլի համար:

Յուրաքանչյուր տնային տնտեսության հետ ստանդարտ իրավական պայմանագրերի հիման վրա բանակցություններ սկսելու և համաձայնության հասնելու նպատակով՝ կարող է ձեռնարկվել երեք այցից բաղկացած գործընթաց: Այն դեպքերում, երբ հողի սեփականատերը չի օգտագործում հողը և առկա է կոնկրետ հողօգտագործող, հողի փոխհատուցումը կառաջարկվի հողի սեփականատիրոջը, մինչդեռ մշակաբույսերի և ծառերի դիմաց փոխհատուցումը կառաջարկվի հողօգտագործողին: Սա վերաբերում է նաև համայնքային սեփականության հողերի վրա գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող հողօգտագործողներին: Համայնքների հետ նախնական շփումից պարզ դարձավ, որ առավել գերադասելի է համարվում դրամային փոխհատուցումը, քան բնաիրային (հող հողի դիմաց) տեսքով փոխհատուցումը: Ծրագիրը կբավարարի նմանատիպ պահանջները՝ համարժեք ագրոնոմիական ներուժ ունեցող, ոռոգված հողատարածքներ տրամադրելով: Մանրամասները ներկայացված են ՀԻՁԿՎՊ-ում:

Ծրագրի համար ձեռք բերվող բոլոր հողերը գյուղատնտեսական նշանակություն ունեն (որևէ արդյունաբերական կամ բնակելի տարածքի ձեռքբերում նախատեսված չէ):

Փոխհատուցման չափը հաշվարկվել է Հայաստանյան պրոֆեսիոնալ գնահատողների կողմից՝ հայկական օրենսդրությանը համապատասխան, և վերանայվել է վերաբնակեցման գծով միջազգային մասնագետի կողմից՝ միջազգային պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Գնահատման մեթոդների մանրամասները (հող, մշակաբույսեր ու ծառեր, շինություններ և այլն) ընդգրկվել են ՀԻՁԿՎՊ-ի և դրա հավելվածի մեջ և կբացահայտվեն ազդակիր կողմերին, որպես առաջարկվող փոխհատուցման պայմանագրի մաս: Հողակտորների գնահատումը արվում է “համեմատական եղանակով,” որի միջոցով, տարածքում պաշտոնական տեղեկատվության հիման վրա, բացահայտվում են համապատասխան գործարքներ, Հայաստանում գործող միջազգային այլ ծրագրերի դրույքաչափերին համապատասխանեցնելու նպատակով:

Միամյա մշակաբույսերը (ցորեն, գարի, կարտոֆիլ, եգիպտացորեն քանջարաբուստանային կուլտուրաները և այլն գնահատվում են յուրաքանչյուր հողակտորից ստացված բերքի քանակի և որակի հիման վրա: Հենց այդ ժամանակահատվածում է գույքագրում իրականացվել: Շուկայական գները բացահայտվել են տեղական շուկաներում դիտարկումների միջոցով և Հայաստանի պաշտոնական վիճակագրության հիման վրա: Ծիրանենիները և այլ մրգատու ծառերը գնահատվել են հողօգտագործողին կամ հողի սեփականատիրոջը պատճառած ֆինանսական վնասը փոխհատուցելու նպատակով: Ծառերը դասակարգվել են ըստ տեսակների և տարիքի, և յուրաքանչյուր տարիքային դասի համար սահմանվել է որոշակի արժեք՝ կախված ծառի միջին բերքատվությունից և բերքի միջին շուկայական գնից:

Լիդիան ընկերությունը կձգտի ապահովել, որ ոչ մի խոցելի անձ անհամաչափ ազդեցություն չկրի հողի ձեռքբերման գործընթացում: Տեղական իշխանությունների հետ համագործակցությամբ, Ամուլսար Ծրագրի ազդեցությունը կրած խոցելի մարդկանց համար կիրականացվեն հետևյալ գործողությունները.

- Աջակցություն հողի օտարման և բանակցային գործընթացի ժամանակ, այդ թվում՝ հողամասի և հողատիրոջ տվյալների որոշման փուլում, հատուկ առանձին հանդիպումներ իրավասության չափանիշները և իրավունքները, փոխհատուցման պայմանագրերի դրույթները, գանգատարկման մեխանիզմները և այլ կետեր բացատրելու նպատակով,
- Աջակցություն վճարման գործընթացում (փոխհատուցում վճարող բանկին տրանսպորտային փոխադրման ապահովում, աջակցություն վճարման գործընթացում, փողերի կառավարման վերաբերյալ իրազեկում և այլն),
- Հնարավորության դեպքում և կապալառուների գործառնական կարիքներից ելնելով վերապատրաստման դասընթացների առաջնահերթության սահմանում՝ աշխատունակության բարձրացման և կապալառուների կողմից աշխատանքի ընդունման հնարավորությունները ավելացնելու նպատակով:

Հողի իրավունքի ձեռքբերման գործընթացի ժամանակացույցը, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման պահանջները սահմանված են ՀԻԶԿՎՊ-ում և դրա

հավելվածում:

Լիդիան ընկերության գանգատարկման մեխանիզմը հասանելի կլինի բոլոր նրանց համար, ովքեր տուժել են հողի ձեռք բերման գործընթացից: Գանգատարկման մեխանիզմի միջոցով կատարվում են հետևյալ գործողությունները.

- Բոլոր բողոքները գրանցվում են, ուսումնասիրվում և ստանում պատասխաններ: Բողոքները համակարգողները բողոքի ստացումը կհաստատեն այն ստանալուց հետո 7 օրվա ընթացքում և կպատասխանեն ստացման պահից 30 օրվա ընթացքում,
- Բողոքների լուծման մեխանիզմը ներառում է բողոքների խաղաղ վերլուծությունը և կարգավորումը,
- Այն դեպքերում, երբ տուժող անհատին կամ խմբին չի բավարարում խաղաղ մեխանիզմի շրջանակներում առաջարկվող լուծումը, նրանք կարող են դիմել դատարան հարցի կարգավորման ընթացքի ցանկացած փուլում:
- Ֆիզիկական տեղափոխում պահանջող տնային տնտեսությունը կստանա իր կորցրած ակտիվների արժեքի փոխհատուցում և աջակցություն կցուցաբերվի իր ընտրությամբ նոր վայր տեղափոխման հարցում:

Հողատերերի և հողօգտագործողների տնտեսական կարգավիճակի խախտման մնացորդային ազդեցությունները

Ակնկալվում է, որ մեղմացման վերոհիշյալ մեխանիզմները, ներառյալ՝ հողը հողի դիմաց տարբերակը, նվազագույնի կհասցնեն տնտեսական կարգավիճակի խախտման ազդեցությունները Գնդեվազ և Սարավան համայնքների հողատերերի և հողօգտագործողների վրա: Այն դեպքերում, երբ հողը նախատեսվում է ձեռք բերել մշտական հիմունքների վրա, այն ձեռք է բերվում բանակցությունների միջոցով, իսկ հողի, մշակաբույսերի, ծառերի և շինությունների կորստի փոխհատուցումը կատարվում է փոխարինման արժեքով: Մոնիթորինգը և գնահատումը նպատակ ունեն գնահատել մնացորդային ազդեցությունները և անհրաժեշտության դեպքում՝ իրականացնել կենսակերպի վերականգնման հավելյալ միջոցառումներ, եթե մոնիթորինգի արդյունքում պարզ դառնա, որ դրա

անհրաժեշտությունը կա:

Ակնկալվում է, որ մնացորդային բացասական տնտեսական կարգավիճակի խախտման ազդեցությունը կլինի միջնաժամկետ-երկարաժամկետ, մեղմ և տեղայնացված՝ վերոհիշյալ մեղմացման միջոցառումների հաջող իրականացման պարագայում (Աղյուսակ 6.16.1), իսկ մնացորդային ֆիզիկական կարգավիճակի խախտման ազդեցությունը կլինի երկարաժամկետ, մեղմ և տեղայնացված:

Աղյուսակ 6.16. Ազդեցության գնահատում, հողատերերի և հողօգտագործողների տնտեսական կարգավիճակի խախտում						
Ենթակատեգորիա	Ուղղություն	Ուժգնություն	Տարածություն	Տևողություն	Ազդեցություն (սկզբնական)	Ազդեցություն (հետո)
Հողատերերի և հողօգտագործողների տնտեսական կարգավիճակի խախտում	Բացասական	Բարձր	Տեղական	Միջնաժամկետ-երկարաժամկետ	Մեծ	Չափավոր
Տնային տնտեսությունների ֆիզիկական կարգավիճակի խախտում	Բացասական	Բարձր	Տեղական	Երկարաժամկետ	Մեծ	Չափավոր

6.16.2 Հովիվների տնտեսական կարգավիճակի խախտում

Հովիվների տնտեսական կարգավիճակի խախտման վրա Ծրագրի գործունեության ազդեցություն

Նախագծի տարածքում հովիվներից շատերը օգտագործում են վարձակալված համայնքային հողատարածքները, որոնք պատկանում են համապատասխան համայնքապետարաններին, գործնականում դրանք մեծամասամբ պատկանում են Գորայքի համայնքապետարանին:

Ծրագրի զբաղեցրած տարածքը կկազմի 599 հեկտար, իսկ ընդհանուր խախտված հողատարածքի մակերեսը կկազմի 922 (սա ներառում է Ծրագրի զբաղեցրած տարածքը ևս): Հավելյալ 477 հեկտար տարածք սահմանափակ հասանելիություն կունենա (ներառյալ այն տարածքները, որոնք սահմանափակված են ցանկապատով, գործառնական անվտանգության պահանջները (օրինակ Պայթեցման գոտիներ) և այն ոլորտները, որտեղ կենդանիները անցնել չեն կարող),

այսպիսով խախտված տարածքը ընհանուր առմամբ կկազմի 920 հեկտար, իսկ սահմանափակ հասանելիություն ունեցող տարածքը՝ 1399 հեկտար: Այս տարածքի որոշ մասեր օգտագործվում են սեզոնային կամ տեղացի հովիվների կողմից կենդանիներին արածեցնելու և ամռանը խոտ աճեցնելու համար: Արգելված տարածքները ներկայացված են Նկ. 6.16.3-ում: Ծրագրի ազդեցությունից անկախ, այս տարածքների հասանելիությունը ներկայումս սահմանափակ է, ինչը պայմանավորված է Ամուլսարի արևմուտք տանող ճանապարհների սակավությամբ:

Հովիվների վրա տնտեսական կարգավիճակի խախտման հավանական ազդեցությունները

Առկա են տնտեսական կարգավիճակի խախտման երկու հիմնական կատեգորիաներ, որոնք կարող էին առաջանալ Ծրագրի արդյունքից.

- Հովիվների կողմից որպես արոտավայր և խոտ աճեցնելու համար օգտագործող հողամաս մուտք գործելու հնարավորության կորուստ, և դրանից բխող տնտեսական կարգավիճակի խախտում,
- Հովիվների կողմից ամռան ամիսներին որպես ժամանակավոր ճամբարներ օգտագործվող ժամանակավոր շինություններ մուտք գործելու հնարավորության կորուստ:

Սեզոնային հովիվների հաշվառումն իրականացվել է 2012թ-ի օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, որի արդյունքները համառոտ ներկայացված են այստեղ: Այն լրացվել է 2014 թ-ի ամռանը անցկացված նպատակային քննարկումներով և Գեոթիմի կողմից 2015թ-ի սեպտեմբերին անցկացված հովիվների հարցումներով: Քանի, որ հովիվները տեղից տեղ են շարժվում, նրանց գտնվելու վայրի սահմանները բացահայտվել են այդ հարցումների և թիրախային խմբերի քննարկումների արդյունքում և պատկերված են Նկար 6.16.5-ում:

Հիսունութ սեզոնային հովիվներ տեղաշարժվել են ավելի ընդարձակ տարածք 2012թ-ին (համարվում է սովորական տարի): Երեսուն սեզոնային հովիվներ հայտնաբերվել է 2015 թ.-ի սեպտեմբերին. Նրանք օգտագործում են այն հողային տարածքները, որոնք, ամենայն հավանականությամբ, կկրեն Ծրագրի

ազդեցությունը: Այս հովիվները հիմնականում օգտագործում են ԴԱԼ-ի արևելյան մասի հողը: Մշտական հովիվները նույնպես կկրեն Ծրագրի ազդեցությունը: Գնդեվազի բնակիչ - մշտական հովիվները, որոնք օգտագործում են ԿՏՀ-ի և փոխակրիչի հարևանությամբ գտնվող հողերը, ամենայն հավանականությամբ, նույնպես կկրեն Ծրագրի ազդեցությունը, հողի օտարման և հողատարածք մուտք գործելու արգելանքի պատճառով: Ինը մշտական հովիվների հարցումների են մասնակցել, սակայն Գնդեվազի ազգակիր հովիվների միայն մի օրինակ է:

Աղյուսակ 6.16.2-ում ամփոփված են Ծրագրի այն տարածքները, որոնք ազդեցություն կունենան սեզոնային հովիվների վրա:

Աղյուսակ 6.16.1: Ծրագրի ազդեցությունը կրող հովիվներ		
Հովիվների գտնվելու վայրեր	Հովիվների կողմից հողի սեզոնային օգտագործումը	Ազգակիր կամ ոչ ազգակիր
Գնդեվազի հովիվների կողմից օգտագործվող ԿՏՀ -ի և փոխակրիչի տարածք	Ինը հովիվ է մասնակցել ուսումնասիրությանը՝ ներկայացնելով Գնդեվազի բոլոր հովիվներին, որոնք ԿՏՀ-ի փոխակրիչի շրջակայքը օգտագործում որպես արոտավայր: 1100 ոչխար, 430 այծ, 650 խոշոր եղջերավոր անասուն, ավանակներ և ձիեր: Գնդեվազի հովիվները իրենց անասուններին արոտավայրեր են տանում ամեն օր, իսկ երբ հողը չորանում է ամռանը, նրանք օգտագործում են ավելի բարձիադիր հողերը: Հովիվները աշխատում են ռոտացիոն հիմունքներով, և ունեն եկամտի՝ այլընտրանքային աղբյուրներ՝ օգտագործելով իրենց հովվությունից ստացվող եկամուտ իրենց այլ եկամուտը պահպանելու համար: Գնդեվազում հայտնի են երկու փորձառու հովիվներ:	Հավանական ազգակիր
Դատարկ ապարների լցակույտ	Ուսումնասիրվել են երեսուն սեզոնային հովիվներ, ովքեր	Հավանական ազգակիր

Աղյուսակ 6.16.1: Ծրագրի ազդեցությունը կրող հովիվներ		
Հովիվների գտնվելու վայրեր	Հովիվների կողմից հողի սեզոնային օգտագործումը	Ազդակիր կամ ոչ ազդակիր
	<p>Ճամբարներ ունեն ԴԱԼ-ի տեղամասի սահմաններում և շրջակայքում և տարածքն օգտագործում են անասունների արածեցնելու համար (բոլորն էլ Խնձորեսկ գյուղի բնակիչներ են): Նրանք ամեն տարի իրենց հետ այս տարածք են բերում մոտ 1420 անասուն (920 խոշոր եղջերավոր անասուն, 470 ոչխար ու այծ, 30 ձի ու ավանակ): Անասունների սեզոնային արոտի ժամանակահատվածը (ապրիլից-սեպտեմբեր և ավել՝ կախված եղանակային պայմաններից) նրանք անց են կացնում վրանային ճամբարներում: Կենդանիները օգտագործում են որպես արոտավայր ավելի լայն տարածք, կաթը ստանում են օրական երկու անգամ կաթի հավաքման մեքենաների միջոցով: Այս տարածքը իրենից ներկայացնում է բարձրության վրա գտնվող ալպիական դաշտեր, որոնք հովիվները երկար տարիներ օգտագործում են որպես արոտավայր: Այս հովիվները ամեն ամառ հեռանում են մոտ 80-100կմ իրենց տներից՝ այս հողը օգտագործելու համար: Տե՛ս Նկար 6.16.4.</p>	

Աղյուսակ 6.16.1: Ծրագրի ազդեցությունը կրող հովիվներ		
Հովիվների գտնվելու վայրեր	Հովիվների կողմից հողի սեզոնային օգտագործումը	Ազդակիր կամ ոչ ազդակիր
Ուղեձոր	Բոլոր բնակիչների հետ հարցազրույց է անցկացվել, նրանցից ոչ մեկը արգելված տարածքը չի օգտագործում որպես արոտավայր	Ոչ ազդակիր



Նկար 6.16.2 Սեզոնային հովիվներ Խնձորեսկ գյուղից (գտնվելու վայրը՝ ԴԱԼ-ից դեպի արևելք ընկած հատվածն է), 2014թ. հուլիս

Ծրագրով պայմանավորված տեղափոխության ազդեցության մասշտաբը կախված է այլընտրանքային արոտավայրի և համարժեք որակի խոտի առկայությունից, ինչպես նաև մուտքը արոտավայր և մարգագետին սահմանափակելու հետ կապված հովիվներին պատճառված անհարմարությունների աստիճանից: Համարժեք որակի հողատարածքը պետք է ունենա միևնույն մակարդակի գյուղատնտեսական ներուժ, հասանելի լինի ենթակառուցվածքներին և ծառայություններին, որոնցից օգտվում են հովիվները, ներառյալ՝ ճանապարհները և կաճանները (որոնք օգտագործում են կաթնամթերքի վաճառքի համար), ջրի աղբյուրները և կառույցները, որոնք օգտագործվում են ճամբարների համար: Հովիվների նպատակային խմբերի հետ 2014թ. հուլիսին անցկացված քննարկումները վերաբերում էին սեզոնային հովիվների մի շարք կենսամիջոցներին, որոնք նրանք ձեռնարկում են տարածքում գտնվելու ժամանակահատվածում: Օրինակ՝ Խնձորեսկ գյուղի հովիվները հայտնել են հետևյալ տվյալները եկամտի և եկամտաբերության վերաբերյալ.

- Ամառային սեզոնի ժամանակահատվածում ճամբարում արտադրվում է մինչև 30-40 կգ պանիր;
- Մոտ 6 մեքենա հավաքում է ստացված կաթը ամեն օր (առավոտյան և երեկոյան), որից եկամուտը կազմում է 140 դրամ 1 լիտրի դիմաց:

Հողատարածքի առկայություն

Հովիվները հողատարածքը վարձակալում են համայնքային իշխանություններից: Ծրագրի հավանական ազդեցության տակ գտնվող սեզոնային արոտավայրային գործունեության մեծ մասն իրականացվում է Գորայքի համայնքային իշխանությունների կողմից կառավարվող հողատարածքների վրա: Վարձակալության պայմանագրերը սովորաբար ձևակերպվում են տեղական իշխանությունների և հովիվներ միջև, և վարձակալման նվազագույն վճար է մուծվում համայնքային բյուջե: Գորայք, Սարավան և Գնդեվազ համայնքների գյուղապետերը փաստում են, որ կան բավականաչափ լրացուցիչ նմանատիպ արոտավայրեր և մարգագետիններ վարձակալության տալու համար, որոնք կարող են օգտագործվել

հովիվների կողմից, երբ Ծրագիրը սահմանափակի մուտքն այն հողատարածքներ, որոնք այժմ օգտագործվում են նրանց կողմից: Կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հովիվների հետ կապված հիմնական գործոնները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, հետևյալն են՝ հողատարածքի և ջրի հասանելիությունը (մուտքի հնարավորությունը), մոտիկությունը կաթի հավաքման առկա կետերից որևէ մեկին և հովիվների մշտական տները:

ՈՒԱԻ (WAI) կողմից հողի բերրիության վիզուալ գնահատման արդյունքները ցույց տվեցին, որ հողատարածքի որոշ մասը, որն օգտագործվել էր որպես արոտավայր, ներկայումս գերաբաժեցված է: Այս տեղեկատվությունը ստացվել է հովիվների կողմից հաշվառում իրականացնելու ընթացքում: Հողատարածքի որակի վատթարացման հարցերը ավելի մանրամասն քննարկվել է Բաժին 6.15-ում:

Անհարմարություն

2012թ.ի հաշվառման ընթացքում, հովիվները նշեցին, որ նախընտրելի է, որ նրանք մնան նույն հողատարածքում, եթե նման հնարավորություն լինի, սակայն եթե դա հնարավոր չլինի, ապա չնչին անհարմարություններ կկրեն տեղափոխության դեպքում, քանի որ առկա է նմանատիպ հողատարածք: 2015թ.-ի սեպտեմբերին, ազդակիր սեզոնային հովիվների 75% - ը պատրաստակամություն են հայտնել տեղափոխվել նոր հողեր այնքան ժամանակ, քանի դեռ ջրի աղբյուրները և մուտքը դեպի այդ հողատարածքները համարժեք կլինեն այն հողին որտեղից նրանք հեռացել են:

Հատկանշական է, որ հովիվների նպատակային խմբերի հետ 2014թ. հուլիսին անցկացված քննարկումների ընթացքում հովիվները, ովքեր հանդիսանում են Խնձորեսկի բնակիչ (և ամառվա ամիսներին գտնվում են ԴԱԼ-ից դեպի արևելք ընկած հատվածում), նշեցին, որ նրանցից երեք օր է պահանջվում, որպեսզի իրենց հոտը գյուղից արոտավայր տեղափոխեն ամառվա սկզբին (յուրաքանչյուր տարվա մայիս ամսին): Եթե հանքին անհրաժեշտ լինի այդ տարածքը, հովիվները նշեցին, որ կցանկանային տեղափոխվել իրենց տանն ավելի մոտ տարածք՝ օգտագործելով իրենց գյուղի մոտակայքում գտնվող սարերի արոտավայրերը, որոնք ըստ իրենց`

“չեն օգտագործվում”: Նրանք սերնդեսերունդ օգտագործում էին Որոտանի հովիտը, որն ավելի երկար է կանաչ մնում, քան որևէ այլ տարածք Հայաստանի հարավ-արևելքում:

Այն հովիվները, ովքեր պայմանագրեր ունեն համայնքի կառավարիչների հետ կապված հողատարածքների վարձակալության հետ, էական անհարմարություններ չեն ունենա այլ հողատարածքի ամրագրման հետ կապված նոր պայմանավորվածություն ձեռք բերելու ժամանակ: Բացի այդ, շատ քիչ հովիվներ են օգտագործում Ծրագրի տարածքում գտնվող հողատարածքն առանց վարձակալության պայմանագրի կամ համայնքի կառավարիչներին դրանց դիմաց վճարելու: Այդ առումով, նրանք ավելի խոցելի են հանգամանքների փոփոխությունների դեպքում: Այդ հովիվները նշում են, որ խմբի կողմից հողատարածքի մուտքի համար չվճարելու հիմնական պատճառն այն է, որ վճարը զգալի է իրենց համար, հետևաբար նրանց խոցելիության աստիճանը հանգամանքների փոփոխության դեպքում ավելի բարձր է: Ընկերությունը հովիվների շրջանում մոնիթորինգ կանցկացնի պարզելու համար, թե արդյոք այն բոլոր հովիվները, որոնց այցելեն են 2012թ., ներառյալ նրանք, ովքեր չունեն վարձակալության պայմանագիր, ի վիճակի են՝ նվազագույն անհարմարություններ կրելով, նոր արոտավայրեր գտնել և օգտագործել դրանք պայմանագրային ամրագրվածությունից անկախ:

Ենթակառուցվածքներ և ծառայություններ

Որևէ մշտական բնակելի շինություններ, որոնք կառուցվել կամ օգտագործվել են հովիվների կողմից որպես ճամբարներ, բացակայում են, այնուամենայնիվ, 2012թ-ի հաշվառման արդյունքները ցույց տվեցին, որ ավելի մեծ տարածքի սահմաններում ինը հովիվներ որպես ճամբար օգտագործում են փլատակներ, կիսակառույց շինություններ և լքված կառույցներ: Ակնկալվում է, որ այդ կառույցներից ոչ մեկը չի կրի Ծրագրի ազդեցությունը: Հովիվների ճամբարների մի մասը շարժական է, այստեղ

օգտագործվում են շարժական վրաններ, այնպես որ դրանք կարելի է հեշտությամբ տեղափոխել նոր վայր:

Հովիվների ճամբարներին ոչ մի տեսակ ծառայություններ չեն մատուցվում (այսինքն չկա էլեկտրականություն, կոյուղի, աղբահանություն, ջրամատակարարում և այն):

Հովիվների վրա տնտեսական կարգավիճակի խախտման ազդեցությունների մեղմացում

Հովիվների կենսամիջոցների վրա հավանական ազդեցությունները կմեղմացվեն մի շարք միջոցառումների իրականացման արդյունքում՝ կախված կրած ազդեցության բնույթից: Ամենակարևոր մեղմացման միջոցը Ծրագրի նախագիծն է, որի միջոցով բացառվել են հովիվների համար կարևոր նշանակություն ունեցող տարածքները (մուտքի, ջրի մատակարարման, արոտավայրերի, բնակության համար կամ այլ նշանակության տարածքներ): Սա պարզ երևում է Ծրագրի տարածքի այն մասերում, որոնք համընկնում են արածեցման վայրերի հետ (ինչպես երևում է Նկար 6.16.5-ում): Ակնկալվում է, որ 30 սեզոնային հովիվներ կկրեն Ծրագրի ազդեցությունը, կապված այլ տարածք տեղափոխվելու անհրաժեշտության հետ: Սեզոնային հովիվները կտեղափոխվեն Որոտան գետի արևելքում գտնվող Գորայք համայնքին պատկանող հողերը:

Ակնկալվում է, որ Գնդեվազում բնակվող հովիվները նույնպես կկրեն Ծրագրի ազդեցությունը: Ի տարբերություն սեզոնային հովիվների, նրանք կկրենն ավելի քիչ ազդեցություններ, հիմնականում գծային փոխարկիչի պատճառով հողերի հասանելիության սահմանափակման հետ կապված: Այդ ազդեցությունը նվազեցնելու համար, Ծրագրի կողմից կտեղադրվեն մի շարք խաչմերուկներ, որոնք թույլ կտան հովիվներին, նրանց կենդանիներին և սարքավորումներին հատել փոխարկիչը: Խաչմերուկների տեղերը կընտրվեն կենսաբազմազանության մասնագետների, ինժեներների և համայնքային իշխանությունների հետ քննարկումների արդյունքում:

Բացի այդ, հետևյալ մեղմացման միջոցառումները կձեռնարկվեն տեղում.

- Ծրագիրը հողի վերաբերյալ իր կարիքների մասին հովիվներին կտեղեկացնի նախապես (առնվազն երեք ամսվա ընթացքում, որպես կանոն), այնպես, որ հնարավոր լինի նրանց համապատասխան ծանուցումներ տալ, և նրանք կարողանան քայլեր ձեռնարկել մեկ այլ արոտավայր տեղափոխվելու համար,
- Ծրագիրը կաջակցի հովիվներին համագործակցել համայնքների ղեկավարների հետ վարձակալության համար նոր համարժեք հողատարածքներ գտնելու հարցում, և կհետևի, որպեսզի համարժեք հողատարածքները հասանելի դառնան մինչ 2015թ. ամառը, երբ կսկսվի շինարարությունը,
- Անշարժ կառույցների (օրինակ՝ շինությունների, որոնք օգտագործվում էին որպես արոտավայրի ճամբարներ) քանդման դեպքում, և եթե հովիվները կարողանան հաստատել սեփականության կամ ուրիշի գույքից և դրա շահույթից օգտվելու իրավունքը (նույնիսկ ոչ պաշտոնապես), Ծրագիրը փոխհատուցում կտրամադրի՝ տուժած հովիվների հետ խորհրդակցելուց հետո ֆինանսական միջոցների տեսքով; Հովիվներին հասանելի կլինի նաև միանվագ փոխհատուցում նրանց գործունեությանը վնաս հասցնելու դիմաց, այն դեպքում եթե նրանք սպիպված են տեղափոխվել մեկ ուրիշ վայր: Եթե նոր արոտավայրի հողերը չունենան ջրի բավարար աղբյուրներ, Ծրագիրը կաջակցի հովիվների համար նոր ջրային աղբյուրների ստեղծմանը:
- Լիդիան ընկերությունը կաջակցի այն հովիվներին, որոնք այժմ չունեն պաշտոնական իրավունք օգտագործվող հողատարածքի նկատմամբ, նոր հողամասեր ստանալու հարցում,
- Այն հովիվները, որոնք ներկայումս չունեն օգտագործվող հողերի նկատմամբ պաշտոնական իրավունքներ, կստանան աջակցություն Լիդիանի կողմից՝ նոր հողակտորներ ստանալու հարցում,
- Լիդիան ընկերությունը կհետևի այս փոփոխությունների ազդեցությանը հովիվների համայնքների կենսակերպի վրա՝ երեք տարվա կտրվածքով կազմակերպելով ամենամյա հետազոտություններ հստակ սահմանված

ցուցանիշներով՝ 2012թ. ելակետային վիճակի համեմատ կենսամիջոցների վրա նյութական փոփոխությունները գնահատելու համար,

- Հովիվների հետ համագործակցելով՝ կվերանայվի մարզում անասնաբուծության բարելավման հնարավորությունները կաթի և մսի արտադրության և մարկետինգի ընդլայնմանն ուղղված տեխնիկական աջակցության միջոցով: Դա կարող է ներառել կաթի հավաքման և սառեցման, արհեստական բեղմնավորման և նոր գենետիկ ֆոնդի ներկայացման բարելավված հնարավորություններ: Փորձական անասնաբուծության ծրագիրն արդեն իրականացվել է և կընդլայնվի փորձական փուլում ստացված տեղեկությունների հիման վրա: Մանրամասներն առկա են ՀԶԿՎՊ-ում :

Բացի վերը նշված ազդեցության մեղմացուցիչ գործունեությունից, սեզոնային հովիվների ավելի ընդլայնված խումբ կդառնա թիրախային Գլուխ 6.13-ում նկարագրված տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում: Տեխնիկական աջակցությունն ուղղված կլինի գյուղատնտեսական արտադրանքի ընդլայնմանը, իսկ տնտեսական գործունեության դիվերսիֆիկացմանը կտրվի առաջնահերթ նշանակություն:

Հանքի փակման պլանի մի մաս կազմող վերականգնման պլանները նվազագույնի կհասցնեն այս ազդեցությունները երկարաժամկետ կտրվածքով, սակայն որոշակի հողատարածք մշտապես կլինի ազդակիր (Հանքի վերականգնման և փակման նախնական պլան (ՀՎՓՆՊ), տես Հավելված 8.18): ԿՏՀ-ն և բացահանքերը (Էրատո, Տիգրանես և Արտավազդես), նույնիսկ մեկ անգամ վերականգնվելով ձեռք կբերեն ձևափոխված հողային հատկություններ և հարմար չեն լինի որպես արոտավայր օգտագործելու համար:

Հովիվների վրա տնտեսական կարգավիճակի խախտման մնացորդային ազդեցություններ

Ծրագրի նախագծման ժամանակ, որտեղ հնարավոր է, խուսափել են տնտեսական կարգավիճակի խախտումից: Հովիվների որոշակի տեղափոխություններ կլինեն Ծրագրի տեղամասի պատճառով, և արոտավայրերի փոփոխությունները որոշ մարտահրավերներ կարող են առաջացնել: Վերը նկարագրված մեղմացման միջոցառումները, ինչպես նաև անսպասելի փոփոխությունների բացահայտման նպատակով իրականացվող ամենամյա մոնիթորինգը մնացորդային ազդեցությունը կդարձնեն փոքր (բացասական):

Աղյուսակ 6.16.2: Ազդեցության գնահատում, տնտեսական կարգավիճակի խախտման ազդեցությունը հովիվների վրա						
Ենթակատեգորիա	Ուղղություն	Ուժգնություն	Տարածություն	Տևողություն	Ազդեցություն (սկզբնական)	Ազդեցություն (հետո)
Հովիվների տնտեսական կարգավիճակի խախտում	Բացասական	Բարձր	Տեղական	Միջնաժամկետ	Մեծ (բացասական)	Փոքր (բացասական)

Աղյուսակ 6.16.4-ը ամփոփում է կենսամիջոցների վրա Ծրագրի ազդեցությունը:

Աղյուսակ 6.16.3. Ազդեցություն ամփոփում - կենսամիջոցներ						
Ենթակատեգորիա	Ուղղություն	Ուժգնություն	Տարածություն	Տևողություն	Ազդեցություն (սկզբնական)	Ազդեցություն (հետո)
Հողատերերի և հողօգտագործողների տնտեսական կարգավիճակի խախտում	Բացասական	Բարձր	Տեղական	Միջնաժամկետ-երկարաժամկետ	Մեծ	Չափավոր
Տնային տնտեսությունների ֆիզիկական կարգավիճակի խախտում	Բացասական	Բարձր	Տեղական	Երկարաժամկետ	Մեծ	Չափավոր
Հովիվների տնտեսական կարգավիճակի խախտում	Բացասական	Բարձր	Տեղական	Միջնաժամկետ	Մեծ	Չափավոր

6.15.1 Մոնիթորինգ և աուդիտ

Ինչպես վերը նշվեց, կենսամիջոցների վրա Ծրագրի գործողություններից ազդեցությունների կառավարման հետ կապված մեղմացուցիչ միջոցառումներին անդրադարձ կարվի մի շարք կառավարման պլաններում: Աղյուսակ 6.16.5-ում ներկայացված են այն մոնիթորինգային ցուցանիշները, որոնք կօգտագործվեն և կմշակվեն մեղմացուցիչ միջոցառումների արդյունավետության գնահատման համար:

Աղյուսակ 6.16.4: Մոնիթորինգի ցուցանիշներ և ազդեցությունների մեղմացում			
Բաժին	Մեղմացման միջոցառումներ	Մոնիթորինգի ցուցանիշ	Կառավարման պլան
6.16.1 Հողատերերի և հողօգտագործողների տնտեսական կարգավիճակի խախտում	<p>Հողի իրավունքի սկզբունքները հստակ սահմանում են.</p> <ul style="list-style-type: none"> Ֆիզիկական տեղահանումից խուսափում (Ծրագրի կառույցները չեն տարածվում բնակելի տարածքների վրա, և ոչ ոք ստիպված չի լինի տեղափոխվել Ծրագրի գործունեության հետևանքով) Հողի իրավունքի հարցը կարգավորվում է բանակցությունների միջոցով՝ համաձայն ԿՍ 5-րդ կետի և ԿՊ 5-րդ կետի; օտարումը համարվում է ծայրահեղ միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, եթե ողջամիտ, բարեկամական կարգավորման հասնելու բոլոր միջոցները սպառվել են, Փոխհատուցումը՝ ըստ փոխարինման արժեքի; Հող հողի դիմաց տարբերակը հասանելի է նրանց համար, ովքեր գերադասում են հողը՝ դրամական փոխհատուցմանը; Ազդակիր հողերը և մարդիկ հայտնաբերվում են կադաստրային տեղեկատվության հիման վրա, որը լրացվում և հավելյալ ստուգվում է անհրաժեշտության դեպքում Կենսամիջոցների վրա ազդեցությունները գնահատվում են և անհրաժեշտության դեպքում մեղմացնող միջոցառումներ են ձեռնարկվում, Բոլոր այն դեպքերում, երբ դա օրինապես, տեխնիկապես և տնտեսապես հնարավոր է, Ծրագրի համար օգտագործված հողը բերվում է իր նախնական վիճակին և վերադարձվում սեփականատիրոջը, հանքավայրի կառուցման և շահագործման նպատակով օգտագործումից հետո, Առկա է գանգատարկման մեխանիզմ, Ազդակիր մարդիկ տեղեկացվում են, և նրանց հետ խորհրդակցություններ են անցկացվում; Հայտնաբերվում են խոցելի անձինք, և նրանց աջակցություն է ցուցաբերվում: 	<ul style="list-style-type: none"> Փոխհատուցման վճարները գրանցվում են և դրանց մասին կանոնավոր կերպով հաշվետվություններ կայացվում են ներկայացվում դեկլարայանը Վաճառքի համաձայնագրերի քանակը գրանցվում է Վճարված փոխհատուցման ամբողջ (հավաքական) գումարը գրանցվում է Գանգատարկման մեխանիզմի վերաբերյալ հաշվետվություններ Կենսակերպի գնահատումներ կանոնավոր կերպով անց են կացվում ազդակիր մարդկանց օրինակի վրա 	<p>Հողի իրավունքի ձեռքբերման և կենսամիջոցների վերականգնման պլան (Հավելված 8.23)</p>

<p>6.16.1 Հողատերերի և հողօգտարժողների տնտեսական կարգավիճակի խախտում</p>	<p>Տեղական իշխանությունների հետ համատեղ Ամուլսարի Ծրագրի ազդեցությունը կրած խոցելի մարդկանց համար կիրականացվեն հետևյալ գործողությունները.</p> <ul style="list-style-type: none"> • Աջակցություն հողի ձեռքբերման և բանակցային գործընթացի ընթացքում, այդ թվում՝ հողամասի և հողատիրոջ նույնականացման փուլում, հատուկ առանձին հանդիպումներ իրավասության չափանիշները և իրավունքները, փոխհատուցման պայմանագրերի դրույթները, գանգատարկման մեխանիզմները և այլ կետեր բացատրելու նկատակով, • Հող հողի դիմաց փոխհատուցման տարբերակի առաջարկ և պնդում, այն դեպքում երբ ակնհայտ է, որ համապատասխան հողը տվյալ ընտանիքի համար հիմնական կենսամիջոց է հանդիսանում, • Աջակցություն վճարման գործընթացում (փոխհատուցում վճարող բանկին տրանսպորտի ապահովում, աջակցության վճարման գործընթացում փողերի կառավարման վերաբերյալ իրազեկում և այլն), • Հնարավորության դեպքում և կապալառուների գործառնական կարիքներից ելնելով վերապատրաստման դասընթացների առաջնահերթության սահմանում՝ աշխատունակության բարձրացման և կապալառուների կողմից աշխատանքի ընդունման հնարավորությունները բարձրացնելու նպատակով: 	<ul style="list-style-type: none"> • Խոցելի տնային տնտեսությունների կենսակերպի գնահատումը անց է կացվում պարբերաբար • Գանգատարկման մեխանիզմի վերաբերյալ հաշվետվություններ 	<p>Հողի իրավունքի ձեռքբերման և կենսամիջոցների վերականգնման պլան (Հավելված 8.23)</p>
<p>6.16.1 Տնային տնտեսությունների ֆիզիկական կարգավիճակի խախտում</p>	<p>Այն տնային տնտեսությունները, որոնցից ֆիզիկական տեղափոխում կպահանջվի, իրենց կորցրած ակտիվների արժեքի համապատասխան կվճարվեն, ինչպես նաև աջակցություն կցուցաբերվի իրենց ընտրությամբ նոր վայր տեղափոխվելու հարցում:</p>	<ul style="list-style-type: none"> • Հետագա գնահատականներ անհատական վերաբնակեցման վերաբերյալ 	<p>Հողի իրավունքի ձեռքբերման և կենսամիջոցների վերականգնման պլան և հավելված (Հավելված 8.23)</p>

<p>6.16.2 Հովիվների տնտեսական կարգավիճակի խախտում</p>	<p align="center">Մեզոնային հովիվները կտեղափոխվեն Որոտան գետի արևելքում գտնվող Գորայք համայնքին պատկանող հողեր:</p> <p>Գնդեվազի հովիվների կրած ազդեցությունները նվազեցնելու համար, Ծրագրի կողմից կտեղադրվեն մի շարք խաչմերուկներ, որոնք թույլ կտան հովիվներին, նրանց կենդանիներին և սարքավորումներին հասնել փոխարկիչը</p> <p>Այն հովիվների համար, ովքեր կկորցնեն մուտքը արոտավայրեր.</p> <ul style="list-style-type: none"> • Լիդիան ընկերությունը կաջակցի հովիվներին համագործակցել համայնքների ղեկավարների հետ վարձակալության համար նոր համարժեք հողատարածքներ ընտրելու հարցում, • Եթե կառույցները (օրինակ՝ շինությունները, որոնք օգտագործվում էին որպես արոտավայրի ճամբարներ) քանդվել են, և հովիվները կարող են հաստատել սեփականության իրավունքը, Լիդիան ընկերությունը կտրամադրի փոխարինող կառույցներ, կամ փոխարինող ապաստաններ կառուցելու համար միջոցներ տուժած հովիվների հետ խորհրդակցելուց հետո, Հովիվներին հասանելի կլինի նաև միանվագ փոխհատուցում նրանց գործունեությանը վնաս հասցնելու դիմաց: • Եթե նոր արոտավայրի հողերը չունենան ջրի բավարար աղբյուրներ, Ծրագիրը կաջակցի հովիվների համար նոր ջրային աղբյուրների ստեղծմանը: • Հովիվները, որոնք չունեն պաշտոնական կամ ոչ պաշտոնական հողի իրավունք, աջակցություն կստանան նոր հողամասեր ստանալու հարցում, • Լիդիան ընկերությունը կաշխատի համայնքային ղեկավարների հետ, որպեսզի հետևի հովիվների համայնքների կենսամիջոցների վրա այս փոփոխությունների ազդեցություններին՝ կազմակերպելով ամենամյա հետազոտություններ նյութական փոփոխությունների վերաբերյալ, • Հովիվների հետ համագործակցելով՝ կվերանայվի անասնաբուծության բարելավման միջոցով կաթի և մսի արտադրության ընդլայնման հնարավորությունները, և 	<ul style="list-style-type: none"> • Հովիվների նոր հաշվառման իրականացում՝ բոլոր հողօգտագործողների մասին տվյալները թարմացնելու համար, • Համայնքային կառավարիչների հետ հանդիպումների ժամանակացույցը ավարտված է, • Կառույցների տեղափոխման մասին զեկույցն ավարտված է, • Առանց հողօգտագործման պաշտոնական իրավունքների հովիվների թիվը, • Նոր հողատարածքների հաշվառում, որոնք հասանելի են դարձել այն հովիվների համար, ովքեր նախկինում չունեին օրինական իրավունքներ, • Ամենամյա սոցիալ-տնտեսական հետազոտության անցկացում հովիվների հետ, • Անասնաբուծության տեխնիկական աջակցության գնահատումը ավարտված է: 	<p align="center">Հողի իրավունքի ձեռքբերման և կենսամիջոցների վերականգնման պլան Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան (Հավելված 8.23 և Գլուխ 8)</p>
<p>ZT520088 Մայիս 2016թ</p>	<p align="center">Տարբերակ 10</p>		<p align="right">Էջ 6.16.29</p>

<p>6.16.2 Հովիվների տնտեսական կարգավիճակի խախտում</p>	<ul style="list-style-type: none"> Մոնիթորինգային համակարգ կստեղծվի տեղափոխված հովիվների կենսամիջոցները գնահատելու համար և համոզվելու, որ առկա խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան ջանքեր են գործադրվում, մինչ դրանք կսկսեն բացասաբար ազդել հովիվների վրա: <p>Բացի վերը նշված ազդեցության մեղմացուցիչ գործունեությունից, սեզոնային հովիվների ավելի ընդլայնված խումբ թիրախ կդառնա վերը նկարագրված տեխնիկական աջակցության ծրագրի համար՝ կապված ոչ արդյունաբերական կենսամիջոցների և տնտեսությունների վրա ազդեցությունների մեղմացման հետ: Տեխնիկական աջակցությունն ուղղված կլինի գյուղատնտեսական արտադրանքի ընդլայնմանը և տնտեսական գործունեության դիվերսիֆիկացմանը:</p>	<ul style="list-style-type: none"> Համայնքների ծախսեր Ներդրման / գնահատում աջակցության համար <p>զարգացման արդյունքների ծրագրերի</p>	<p>Հողի իրավունքի ձեռքբերման և կենսամիջոցների վերականգնման պլան, Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան, Համայնքների զարգացման պլան (Հավելված 8.23, Հավելված 8.6 և Հավելված 8.16)</p>
---	---	---	--

Եզրակացություն

Ազդեցության գնահատումն իրականացվել է շինարարական աշխատանքների, հանքի շահագործման և փակման ազդեցությունները անմիջապես Ծրագրի տարածքում և դրա մերձակայքում կեսամիջոցների վրա գնահատելու նպատակով: Արդյունքները ամփոփված են ստորև.

- Ազդեցությունները բաժանվում են երկու հիմնական դասերի. Հողատերերի և հողօգտագործողների տնտեսական և ֆիզիկական կարգավիճակի խախտում և հովիվների տնտեսական կարգավիճակի խախտում;
- ՀԻԶԿՎՊ-ն մշակվել է մեղմելու և փոխհատուցելու հողատերերի, հողօգտագործողների և հովիվների տնտեսական և ֆիզիկական կարգավիճակի խախտման հետ կապված ազդեցությունները: Մեղմացուցիչ միջոցառումների արդյունավետ իրականացումը ենթադրում է՝ տեղահանումից խուսափում, ազդակիր տարածքների փոխհատուցում՝ ըստ փոխարինման արժեքի, բանակցությունների միջոցով կարգավորում, հող հողի դիմաց կենսունակ տարբերակի տրամադրում նրանց, ովքեր գերադասում են հողը դրամական փոխհատուցումից, խոցելի տնային տնտեսությունների վրա հողի ձեռքբերման գործընթացի անհամաչափ ազդեցության բացառում, աջակցություն հովիվներին նոր արտավայրեր մուտք ունենալու հարցում և տեխնիկական աջակցություն անասնաբուծությանը և մշակաբույսերի աճեցմանը, ինչը կնվազեցնի տնտեսական կարգավիճակի խախտման հետ կապված ազդեցությունները, դարձնելով դրանք չափավոր հողատերերի, հողօգտագործողների համար և չափավոր բացասական՝ հովիվների համար: